Ընկերներ Նորայր Թորիկեան եւ Միհրան Աւագեան Այցելեցին Մայր Հայրենիք

Յունիս ամսուայ ընթացքին Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի հրաւէրով, բրիտանահայ հասարակական գործիչներ, ընկերներ Նորայր Թորիկեան /Նոր Սերունդ Մշակ. Միութեան ատենապետ/ և Միհրան Աւագեան /Հ.Մ.Մ.-ի ատենապետ/ այցելեցին մայր հայրենիք՝ խորհրդային Հայաստան:

Պատասխանատու մեր ընկերները շուրջ երկու շաբաթ ժանեթացան քաղամամայր Երեւանին, Հայաստանի տեսարժան վայրերուն, հանդիպումներ ունեցան Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջինին հետ:

Հայրենիքի և բրիտանահայ գաղութի մշակութային կապերը ամրացնելու մտահոգութեամբ, ընկերներ Թորիկեանն ու Աւագեանը գործնական հանդիպումներ ունեցան Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի պատասխանատուներուն հետ: Հանդիպումներու ընթացքին հայրենի պատասխանատուները պատրաստակամութիւն յայտնած են առաւել մեծ ուշադրութիւն դարձընելու բրիտանահայ գաղութին: Յառաջիկայի հաւանաբար մենք կ'ունենանք հայրենիքէն ժամանած արուեստագէտներու, մարզիկներու և մտաւորականներու նոր պատուիրակութիւններ:

Ընկերներ Նորայր Թորիկեանի և Միհրան Աւագեանի Երեւան գտնուած միջոցին տեղի ունեցած են յուզումներ՝ Ղարաբաղի առնչութեամբ: Բրիտանահայ մեր ընկերները այս առիթով հանդիպումներ ունեցած են հայրենի կարգ մը մտաւորականներուն հետ, լուսաբանութեան համար: Բոլոր երեւոյթները ցոյց կուտան թէ, յայտնեցին

ՁԱԽԷՆ՝ Ն. ԹՈՐԻԿԵԱՆ և Մ. ԱՒԱԳԵԱՆ

ընկերները, հայ ժողովուրդը միասնական է, կարգապահ ու գիտակից պահանջատէր, մտաւորականութիւնը ամէն կերպ կ'աշխատի պահանջատիրական պայքարը տանիլ ճիշդ հունով՝ վերակառուցման ոգիին համաձայն ու համոզուած է վերջնական յաղթանակի: Գրող կարէն Սիմոնեանի լուսաբանութիւնները եղած են գոհացուցիչ ու գրեթէ ամբողջական:

Եզրակացութիւն այն է, որ մեր ժողովուրդը հայրենիքի մէջ տնտեսական, ընկերային, ազգային և մշակութային կեանքի ժիրէն ներս մեծ վերափոխումներու սեմին է:

«Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթը ընկերներ Թորիկեանի և Աւագեանի հետ ընդարձակ հարցազրոյց լոյս ընծայեց, ուր կը դրսեւորուին անոնց խոր ու ամբողջական տպաւորութիւնները հայրենիքի մասին: